

սահղծագործութիւն եղող գծածները: Այս վերջնոյն նահանջը տեղի ունեցաւ աւելի ուշ, և նահանջին պայմաններն ալ կը տարբերէին¹: Վիշապ գորգերու նահանջի միջոցին և անկէ վերջ զարգացող Արաբական ազդեցութեան արդիւնք եղող քիւֆի ձեւը նոր աղբիւր հայթայթեց հայ գորգաշէն—գծագրին: Իսկ վիշապ գծագրութիւնն ալ դարձեալ Արաբ ազդեցութեան տակ փոփոխութեան ենթարկուեցաւ, վիշապը խլուեցաւ իր տիրապետող առանձնութենէն, Արաբական ճոխութեան խճողումը եկաւ վիշապը զրեթէ կորսնցնել գորգերուն գծագրական երկրորդական նեղնուազ դիրքերուն մէջ: Բուսական ազդեցութիւնը թէեւ երեւակայական զարդերու վերածուեցաւ սակայն այնպիսի վիճակ մը ստեղծեց որ անոնց (վիշապներուն) բնիկ ծագումն իսկ շփոթել պիտի տար մեզի: Երբ այս զարգացումն ալ անճիտուեցաւ, Սելճուք, Թաթար, Թուրք արշաւանքները Հայաստանը անապատի մը վերածեցին, որմէ վերջ Ժե—Ժէ դարերու ընթացքին Հայաստան եղաւ անիշխանական քառս մը, ուր գորգաշինութեան պէս արուեստներ չէին կրնար ապրելու տարրական պահանջքն իսկ ունենալ, ուստի այս զարգացումն ալ ստիպուեցաւ նահանջել, կղզիանալով Հայաստանի ապահովագոյն լեռնային շրջաններուն, Կովկասի և Ղարաբաղի կողմերը ու մէջը, ուր շնորհիւ բնական տուեալներու, երկիրը պահեց իրեն տրուած այս թանկագին աւանդները: Այս տեղատուութիւնը նոյն իսկ ոմանց կարծել տուաւ թէ հայկական վիշապ գորգերը ուրիշ ակերէ յառաջացած են: «Բնդհանրապէս կ'ըսուէր թէ այս գորգերը Կովկասի մէջ ծագում առած էին»²: Մինչ իրականութիւնը սա էր որ անոնք հոն մղուած ապաստանած էին: Եւ միայն նմոյշներն էին փճացած, փայլուն հայ գեղարուեստական համբաւաւոր արտադրութիւնը եղող գորգերուն Վիշապ տեսակներուն:

Արաբական ազդեցութեան շրջանէն մեզի հասած վիշապ գորգերը կը տարբերին

Պերլինի թանգարանի գորգէն կամ Սիե նայի որմանկարին վրայ գծուած գորգէն:

ԺԱ դարէն կամ անկէ դար մը աւելի առաջ սկսած ըլլալու են Արաբական շրջանի կազմութեամբ վիշապ գորգերը, ուր կան թէեւ կանոնաւոր բայց բազմաթիւ բաժանումներ (մինչ հին վիշապ գորգերը ունէին երկու բաժանումներ) կատարուած իրարու մէջ հիւսուած ատամնաձեւ տերեւներով, նման վարդի կամ որթի տերեւներուն, որոնց արմաւենեակ = palmette կ'ըսէին գեղարուեստագէտք, որոնք Ա. Ս. Նկատողութեամբ «պայմանադրական ոճով գծագրուած չինական յաւառ (lotus ներ) են, իսկ ըստ ուրիշներու բաց ձեռք մը՝ կարկառուն հինգ մասներով ափէ մը (ներշնչուած և յառաջացած կը նկատուի) կը նմանին, քիչ կամ շատ այլասերած, հոս կամ հոն, այս կամ այն գորգին մէջ: Եւ ինչպէս ըսի՝ վիշապն իսկ իր երեւոյթով բնորոշանկէն (Պերլինի և Սիենայի) վատասերեալ, չարափոխեալ, անճանաչելի ըլլալու վիճակին հասցուած է:

Իբր վերջաբան այս մասին աւելցնեմ որ բռնագաղթ կամ պանդուխտ հայ գորգաշէն վարպետներուն շնորհիւ օտար աշխարհներու, օտար երկիրներու մէջ գորգաշինութիւնը ծաղկեցաւ, զարգացաւ, ճոխացաւ: Եւ հետաքրքիրը զիւրաւ կրնայ գտնել հայկական յատկանիշներ Հայաստանէն հեռու շինուած ոչ—հայկական բազմաթիւ թէ հին և թէ նոր գորգերու մէջ, որոնց անճանթ հեղինակներէն ոմանք նոյն իսկ հայեր ըլլալու էին:

Աւարտելէ առաջ խոստացայ նաեւ երկու խօսք ըսել Պերլինի թանգարանին և նաեւ Սիենայի որմանկարին մէջ գծուած գորգերուն մէջ գտնուող վիշապին հետ յիշուած փիւնիկին մասին:

Առաջին անգամ ըլլալով Արմենակ Սա-

1. Այս մասին աւելի և պէտք եղած մանրամասնութեամբ տեսնել իմ «Հայ և Արաբ գեղարուեստական յարաբերութիւնները» ուսումնասիրութեանս մէջ:

2. «Շանթ», 1912, էջ 417. Իսկ Մ. Բոք երկարօրէն. — տես իմ Թարգմանածս, «Բազմապէպ», 1931, էջ 115—124: